

Կենսագրական Գիծեր

ՊՐՆ. ԱՐՇԱԿ ԳՕԼՍՏՆՆ

Աւստրալիա հաստատուած ազնուազարմ հայորդի՝ Պրն. Արշակ Գօլստըն ծնած է Պարսկաստանի Չարմահալ շրջանի Լիւսսիան գիւղը 16 Փետրուար 1912 թուականին:

Ան եղած է ընտանիքի երիցագոյն զաւակներէն մին, ունենալով երեք եղբայր եւ երկու քոյր:

Պրն. Ա. Գօլստընի կեանքը անցած է մեծ վերիվայրումներով ու դժուարութիւններով. տակաւին մանուկ՝ 8 տարեկան, վեց ամիս հօրը մօտ Պասրա քաղաքը անցնելէ ետք, կը դրկուի Զնդկաստանի Մարդասիրական ճեմարանը (Կալկաթա), որպէս գիշերօթիկ աշակերտ:

Ճեմարանի կրթական հիանալի մթնոլորտին մէջ, ուսման կողքին կէրտուած է իսկական մարդը Պրն. Ա. Գօլստընի մէջ: Ան եղած է փայլուն աշակերտ ու յարգուած մարզիկ եւ խլած առաջնութիւններ կրթական ու մարզական կեանքի ընթացքին:

Ճեմարանական կեանքի աւարտէն ետք, ան տիրացած է համալսարանական ուսման, միաժամանակ որոշ շրջան մը զբաղած է ուսուցչութեամբ: Եղած է նաեւ հայկական մարզական ակումբին քարտուղարը:

1937-ին Սինկափուրի մէջ աշխատած է «Էտկար» Առեւտրական ընկերութեան մէջ: Բ. Աշխարհամարտին մաս կազմած է կամաւորական գունդերու եւ ռմբակոծումներու ընթացքին վիրաւորուած է եւ գերի բռնուելով ապրած է երեքուկէս տարի գերութեան մէջ:

1945-ին գերութենէ ազատուելէ ետք նաւով ուղեւորութիւն մը ունեցած է

դէպի Անգլիա եւ ապա վերադարձած ու վերահաստատուած է Սինկափուր, ուր կարգ մը ընկերութիւններու մէջ աշխատելէ ետք, հաստատած է իր առեւտրական անձնական գործը 1957-ին. նոյն տարին նաեւ Կալկաթայի մէջ ամուսնացած է իր կեանքի ընկերուհիին՝ Տիկին Սօֆիին հետ: Իր ստեղծած ընկերութիւնը արագօրէն բարգաւաճած է եւ Պրն. Ա. Գօլստըն հասած է մեծ յաջողութիւններու առեւտրական գործերու մէջ:

1980-ական թուականներուն, հանգստեան կոչուելէ ետք Գօլստըն հաստատուած է Սիտնի: Իր բարեսիրական կեցուածքին ու հայրենասէր ոգիին շնորհիւ, Մեծի Տանն Կիլիկիոյ երջանկայիշատակ Գարեգին Բ. Կաթողիկոսը իրեն ու իր ազնուափայլ տիկնոջը՝ Սօֆիին շնորհած է Կիլիկեան Իշխանի ու Իշխանուհիի շքանշանները եւ աւելի ուշ, Գարեգին Բ. Կաթողիկոս որպէս Ամենայն Հայոց Գարեգին Ա. շնորհած է Կաթողիկոսական Կոնդակ:

Կենսագրական այս հարուստ անցեալի կողքին, Պրն. Ա. Գօլստըն իր առաջին պարտականութիւնը սեպած է առատաձեռնօրէն տալ իր ազգին իր կարելին եւ այսօր իր իշխանական նուիրատուութիւններով Սիտնիի մէջ գոյութիւն ունին ու կը գործեն Աւստրալահայ Ընկերակցութեան կէդրոնը եւ Համագայինի ամենօրեայ վարժարանը, որոնք արժանիօրէն կը կրեն մեծ բարերարին ու անոր ազնուափայլ տիկնոջ անունները:

Բարեսիրական իր կեցուածքներէն անկախ, մարզանքը մեծ տեղ գտած է Պրն. Գօլստընի կեանքին մէջ եւ իր հաստատումով այդ մէկը կը պարտի ճեմարանի անգլիացի տնօրէնին, որ եղած է մարզանքի սիրահար եւ այդ ուղղութեամբ մղած է աշակերտները:

(Continued on page 2)

(Continued from page 1)

Մարզական այս մթնոլորտին մէջ թրծուած է Պրն. Գօլստըն ու խաղցած է մարզական զանազան խաղեր, ինչպէս ֆութպոլ, հոքի, քրիքէթ, բռնցքամարտ, ռըակպի, թենիս, փինկ-փոնկ եւ պատմինթոն:

Այս յատկանիշները անկասկած որ կերտեցին Արշակ Գօլստըն իսկական առումով մարդը ու անոնք դարձան անոր գլխաւոր ուղեցոյցները իր անձնական գործերու ու յարաբերութիւններու ընթացքին ու առաջնորդեցին զինք յարատեւ յաջողութիւններու:

ՏԻԿԻՆ ՍՕՖԻ ԳՕԼՍՏՐՆ

Տիկին Սօֆի Գօլստըն ծնած է Կալկաթա, Յնդկաստան, 9 Օգոստոս 1921 թուականին:

Ան դուստրն էր ճորճ եւ Յայկանուշ Մանսուրներու: Ունեցած է չորս քոյրեր եւ երկու եղբայրներ: Եղած է ընտանիքին 5-րդ զաւակը:

Տիկին Սօֆին իր ուսումը ստացած է Կալկաթայի մէջ եւ վայելելով բարեկեցիկ կեանք ունեցած է շատ ուրախ եւ հաճեի մանկութիւն:

1956 թուականին առաջին անգամ ըլլալով հանդիպած է Պրն. Արշակ Գօլստընին, երբ ան առեւտրական գործով Կալկաթայէն անցնելով դէպի Եւրոպա ուղեւորութեան ելած էր:

16 Նոյեմբեր 1957-ին ամուսնացած է Արշակ Գօլստընին հետ եւ իր ամուսնոյն հետ ապրած է Սինկափուրի մէջ մինչեւ 1982 թուականը:

Տիկին Սօֆին եղած է գլխաւոր աջակիցը Պրն. Արշակ Գօլստընին, անոր առեւտրական գործերու ուշագրաւ յաջողութիւններու ընթացքին եւ իր ամուսնոյն հետ ապրած է երջանիկ կեանք Սինկափուրի մէջ:

1982-ին իր ամուսնոյն հետ հաստատուած է Սիտնի, Աւստրալիա եւ իր վկայութեամբը առաջին անգամ ըլլալով լծուած է տնային աշխատանքի,

հոգալու համար ընտանիքի տնային կարիքները:

Իր ամբողջ կեանքի ընթացքին ան եղած է համեստ, բարի ու օրինակելի հայուհի մը եւ արժանացած է իր շրջապատի անվերապահ սիրոյն ու գնահատանքին:

Իր բարեսիրական կեցուածքին ու հայրենասնուէր ոգիին շնորհիւ, Մեծի Տանն Կիլիկիոյ Երջանկայիշատակ Գարեգին Բ. Կաթողիկոսը իրեն շնորհած է Կիլիկիան Իշխանուհիի շքանշան եւ ւելի ուշ, որպէս Ամենայն Յայոց Գարեգին Ա. Կաթողիկոս շնորհած է իրեն ու ամուսնոյն Կաթողիկոսական Կոնդակ: